

որ նոր խոռվութիւններ ծագին: Մարեսպուղի Արքեպիսկոպոս ճարահատ 8: Յունուար 1670ին կը գրէ Ս. Ժողովին՝ թէ հայերը չեն ուզեր օգնական Եպիսկոպոս մ'ընտրել: Ս. Ժողովը մինչեւ 1673 կը շարունակէ յորդորել թէ՛ Նիկոլ Թորոսովիչը եւ թէ՛ հայ երեսփոխանները, որպէսզի հաւանին օգնական Եպիսկոպոսի մ'ընտրութեան: Հայ երեսփոփոխանները՝ փոխանակ Ս. Ժողովին թելադրանքը կատարելու, թագաւորէն կը խնդրեն իրենց Արքեպիսկոպոսին վերադարձը: Եւ թագաւորը 28 Հոկտեմբեր 1671ին անձամբ կը միջամտէ խնդրին, եւ կը գրէ Կղեմէս Ժ. Քահանայապետին, որպէսզի հաճի Լէոպոլիս զրկել Հայոց Արքեպիսկոպոսը (20):

Մինչ Ս. Ժողովը՝ թագաւորին այս նամակին մասին բացատրութիւններ կ'ուզէ Լեհաստանի նորընտիր Առաքելական Նուիրակէն, Ռանուցցի Արքեպիսկոպոսէն, յանկարծ կ'իմանայ, 1671ի Դեկտեմբերին՝ թէ Քամիենիեց հասած է Թէոփորոս Եպիսկոպոս Վարդանովիչ, ի զիմաց Յակոբ Կաթողիկոսին, իբրեւ օգնական Թորոսովիչ Արքեպիսկոպոսին (21):

Վարդանովիչ Կ. Պոլսոյ մէջ Եպիսկոպոս ձեռնադրուած էր Յակոբ Կաթողիկոսէն, որ զինք Լեհաստան զրկելով, երեք նամակներ յանձնած էր իրեն. մին ուղղուած Բոլսնիոյ Առաքելական Նուիրակին (13 Օգոստոս 1671)

(20) ԱճԳ. 251-258:

(21) ԱճԳ. 259: